ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 12

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով Նոր Երզնկա համայնքի 4-րդ փողոցի 20-րդ տան բնակիչ Լարիսա Վարդանյանի դիմումը բուժօգնության նպատակով՝ դրամական օգնություն ստանալու խնդրանքով՝ *որոշում եմ.*

1.Լարիսա Վարդանյանին տրամադրել դրամական օգնություն 30000 (քսան հազար) դրամի չափով:
2. Հանձնարարել գլխավոր մասնագետ Հ.Նազարյանին բյուջեի համապատասխան հոդվածից կատարել վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20___թ. ______________ ____
գ.Նոր Երզնկա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 13

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 26.12.2002 թվականի <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքացի Դավիդ Սարգիսի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 0,12 հա հողամասի քարտեզագրման արդյունքում նրանց պատկանող հողամասի մակերեսը կազմել է 0.12596 հա (07-050-0009-00009 կադաստրային ծածկագրով):
Քարտեզագրման արդյունքում ավել օգտագործվող 0,00596 հա հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար: Այն չի խոչնդոտում հողամասերի նպատակային օգտագործմանը, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմաշակության հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում և չի առաջացնում սերվիտուտ՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Դավիդ Սարգիսի Մանուկյանի սեփականության իրավունքը Նոր Երզնկա համայնքում ըստ կադաստրային քարտեզագրման 07-050-0009- 0009 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,12596 հա հողամասի նկատմամբ:
2. Որոշումը ներկայացնել ՀՀ ԱԳԿ միասնական ստորաբաժանմը պետական գրանցում կատարելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 թ. ____________ ____
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
18 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 14

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 2003 թվականի հուլիսի 2-ին կնքված պայմանագրի, հաշվի առնելով վարձակալ Լևոն Խուրշուդյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Լուծել 2003 թվականի հուլիսի 2-ին կնքված (գրանցված է Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի գրասենյակում) գյուղատնտեսական նշանակության վարելահողի տրամադրման վարձակալության պայմանագիրը:
2. Սույն որոշումից ծագող պետական գրանցման հետ կապված վճարները կատարվում է քաղ. Լևոն Խուրշուդյանի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղ. Լ. Խուրշուդյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20__ թ.________________ ____
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 15

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 2003 թվականի հուլիսի 2-ին կնքված պայմանագրի, հաշվի առնելով վարձակալ Գրիգոր Մարդոյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Լուծել 2003 թվականի հուլիսի 2-ին կնքված (գրանցված է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի գրասենյակում) գյուղատնտեսական նշանակության վարելահողի տրամադրման վարձակալության պայմանագիրը:
2. Սույն որոշումից ծագող պետական գրանցման հետ կապված վճարները կատարվում է քաղ. Գրիգոր Մարդոյանի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղ. Գ. Մարդոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. ________________ ____
գ.Նոր Երզնկա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 16

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, ինչպես նաև Կորյուն Ղազարյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Բավարարել Կորյուն Ղազարյանի դիմումը և տալ շինարարության թույլտվություն Նոր Երզնկա համայնքի 19-րդ փողոցի 6 հասցեում ավտոտնակ կառուցելու համար:
2. Հանձնարարել Նոր Երզնկա համայնքի համայնքապետարանի գլխավոր մասնագետ Լ. Խուրշուդյանին նախապատրաստել և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել <<Քաղաքաշինության մասին>> օրենքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթեր:
3. Սույն փաստաթուղթը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. ____________________
գ.Նոր Երզնկա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 17

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 26.12.2002 թվականի <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքացիներ Գրիգոր, Հրանտ Մարդոյաններին և Գայանե Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,13 հա հողամասի քարտեզագրման արդյունքում նրանց պատկանող հողամասի մակերեսը կազմել է 0.1356 հա (07-050-0015-0003 կադաստրային ծածկագրով):

Քարտեզագրման արդյունքում ավել օգտագործվող 0,0056 հա հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար: Այն չի խոչընդոտում հողամասերի նպատակային օգտագործմանը, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմաշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում և չի առաջացնում սերվիտուտ՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Գրիգոր, Հրանտ Մարդոյանների և Գայանե Մարտիրոսյանի սեփականության իրավունքը Նոր Երզնկա համայնքում ըստ կադաստրային քարտեզագրման 07-050-0015-0003 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,1356 հա հողամասի նկատմամբ:
2. Որոշումը ներկայացնել ՀՀ ԱԳԿ միասնական ստորաբաժանմը պետական գրանցում կատարելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 ___ թ. ____________________
գ.Նոր Երզնկա